



ՈՐՈՇՈՒՄ

ՎԱՐՉԱԿԱՆ ԳՈՐԾԻ ՎԱՐՈՒՅԹԸ ԿԱՐՃԵԼՈՒ ՄԱՍԻՆ

28.03.2014թ.

ք.Գյումրի

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը՝
 նախագահությամբ՝ դատավոր Էդ.Նահապետյանի
 Մասնակցությամբ՝ պատասխանողի ներկայացուցիչներ Գ.Բաղդասարյան
 Վ.Եփրեմյան

դռնբաց դատական նիստում քննելով թիվ ՎՂ5/0002/05/14 վարչական գործն՝ ըստ հայցի Սիլվա Հայկի Մադոյանի ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետի տեղակալի գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ բնակարանի վերաբերյալ պայմանագրի կնքելուն պատավորեցնելու պահանջի մասին

Պ Ա Ր Ձ Ե Ց

Սիլվա Հայկի Մադոյանը 10.01.2014 թվականին հայցադիմում է ներկայացրել Հայաստանի Հանրապետության վարչական դատարան /Գյումրու նստավայր/ ընդդեմ Շիրակի մարզպետարանի՝ Շիրակի մարզպետի տեղակալի գրությունը ոչ իրավաչափ ճանաչելու, որպես հետևանքների վերացման ածանցյալ պահանջ՝ բնակարանի վերաբերյալ պայմանագրի կնքելուն պատավորեցնելու պահանջի մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատարանի 16.01.2014 թվականի որոշմամբ հայցադիմումն ընդունվել է վարույթ:

Հրավիրվել են նախնական դատական նիստեր: Հայաստանի Հանրապետության վարչական դատարանը 27.03.2014 թվականին հրավիրված նախնական դատական նիստի ընթացքում որոշում է կայացրել վարչական գործը դատաքննության անցնելու մասին:

19.03.2014 թվականին հայցվորը դատարան է ներկայացրել դիմում հայցից հրաժարվելու և գործի վարույթը կարճելու մասին:

Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի համաձայն՝ դատարանը գործի քննության ցանկացած փուլում կարճում է գործի վարույթը, եթե հայցվորը հրաժարվել է հայցից, բացառությամբ սույն օրենսգրքի 26-րդ գլխով սահմանված այն գործերի, որոնց քննությունը բխում է հանրության կամ պետության շահերից:

Նույն հոդվածի 2-րդ մասի համաձայն՝ եթե հայցվորը ներկայացնում է դիմում հայցից հրաժարվելու վերաբերյալ, ապա դատարանը երկշաբաթյա ժամկետում հրավիրում է դատական նիստ՝ այն քննելու նպատակով: Եթե հայցվորը նիստի ժամանակ կրկնում է հայցից հրաժարվելու իր դիմումը կամ պատշաճ ծանուցված լինելու պայմաններում չի ներկայանում դատական նիստին, ապա դատարանը եռօրյա ժամկետում որոշում է կայացնում գործի վարույթը կարճելու մասին:

Նկատի ունենալով այն հանգամանքը, որ հայցվորը դատարան է ներկայացրել դիմում հայցից հրաժարվելու մասին, դատարանը գտնում է, որ Հայաստանի Հանրապետության վարչական դատավարության օրենսգրքի 96-րդ հոդվածի 1-ին մասի 6-րդ կետի և 2-րդ մասի հիման վրա վարչական գործի վարույթը պետք է կարճել:

